**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 հոկտեմբերի 2016 թվականի**

**Գիտական խորհրդին կից համալսարանական հանձնաժողովների անդամների բեռնվածությունը սահմանելու և գիտական խորհրդի 2012 թվականի հունիսի 20-ի «Ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմատիվներ սահմանելու մասին» որոշման 1-ին կետը ուժը կորցրած ճանաչելու մասին**

Լսելով և քննարկելով **«Գիտական խորհրդին կից համալսարանական հանձնաժողովների անդամների բեռնվածությունը սահմանելու և գիտական խորհրդի 2012 թվականի հունիսի 20-ի «Ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմատիվներ սահմանելու մասին» որոշման 1-ին կետը ուժը կորցրած ճանաչելու մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Գիտական խորհրդին կից համալսարանական մշտական գործող հանձնաժողովների անդամների բեռնվածությունը սահմանել 50 ժամ և ներառել ուսումնական բեռնվածության մեջ:

2. Ուժը կորցրած ճանաչել գիտական խորհրդի 2012 թվականի հունիսի 20-ի «Ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմատիվներ սահմանելու մասին» որոշման 1-ին կետը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսում-նամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017-2018 ուսումնական տարվանից:

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Կ. Լ. Աթոյան**

**19.10.2016 թ.**